



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2009թ. հունվարին /վերլուծություն/

2009թ. հունվարին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 7277 գործարքներ, որոնց քանակը 2008թ. հունվարի համեմատ նվազել է 21.3%-ով, իսկ 2008թ. դեկտեմբերի համեմատ՝ 49.6%-ով:

2009թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2266 օտարման գործարքների 76.5%-ը կազմել են առուվաճառքները, 21.7%-ը՝ նվիրատվությունները և 1.8%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 29.8%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 31.3%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2009թ. հունվարին, 2008թ. դեկտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 49.2%-ով, իսկ 2008թ. հունվարի համեմատ՝ 40.6%-ով:

2009թ. հունվարին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 58.6%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2009թ. հունվարին, 2008թ. դեկտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 54.3%-ով, իսկ 2008թ. հունվարի համեմատ՝ 47.2%-ով:

2009թ. հունվարին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	հունվար 2008թ.	հունվար 2009թ.	դեկտեմբեր 2008թ.
Կենտրոն	475100	499800	496300
Արաբկիր	379300	362100	392800
Քանաքեռ-Զեյթուն	298400	282300	296500
Նոր-Նորք	254400	254300	265700
Ավան	256200	259100	264600
Էրեբունի	260500	270200	267200
Շենգավիթ	270000	260500	270300
Դավթաշեն	277500	288200	297200
Աջափնյակ	260600	246200	255000
Մալաթիա-Սեբաստիա	255200	238100	253600
Նուբարաշեն	142900	152600	152600
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	285500	283000	292000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. հունվարին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. դեկտեմբերի համեմատ նվազել են 3.1%-ով:

2009թ. հունվարին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 197 բնակարաններ, որոնց քանակը 2008թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 50.4%-ով, իսկ 2008թ. հունվարի համեմատ՝ 47.5%-ով:

2009թ. հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հունվար 2008թ.	հունվար 2009թ.	դեկտեմբեր 2008թ.
Արագածոտն	Աշտարակ	112500	143000	145100
	Ապարան	31000	37000	37000
	Թալին	40500	48200	48200
Արարատ	Արտաշատ	91200	97100	105700
	Մասիս	116700	146600	146600
	Վեդի	74400	88400	84800

	Արարատ	58500	78500	75500
Արմավիր	Վաղարշապատ	149700	163300	175600
	Արմավիր	109600	112000	126500
	Մեծամոր	69500	88800	93000
Գեղարքունիք	Սևան	76800	102600	104500
	Գավառ	41100	51100	51100
	Մարտունի	61900	73300	73300
	Վարդենիս	29300	33500	33500
	Ճամբարակ	15600	17300	17300
Լոռի	Վանաձոր	81900	102700	105400
	Ստեփանավան	44300	52300	50200
	Մայիտակ	59000	65400	65400
	Ալավերդի	27900	33200	33200
	Տաշիր	29000	33500	33500
	Թումանյան	5500	5600	5600
	Շամլուղ	3200	3200	3200
	Ախթալա	12700	13000	13000
Կոտայք	Աբովյան	156900	159800	174000
	Նոր Հաճն	113900	134200	145100
	Բյուրեղավան	86500	106000	121600
	Եղվարդ	106300	121500	127600
	Հրազդան	59800	75400	75400
	Ծաղկաձոր	129400	172500	172500
	Զարենցավան	76200	97700	103000
Շիրակ	Գյումրի	87900	120700	122500
	Արթիկ	50600	64600	62500
	Մարալիկ	26000	30700	29800
Սյունիք	Գորիս	89100	114600	114600
	Կապան	79000	102700	110400
	Միսիան	62600	88500	88500
	Մեղրի	44100	52200	50500
	Ագարակ	27700	31400	30300
	Քաջարան	41600	55800	53600
	Դաստակերտ	7000	7000	7000
Վայոց Ձոր	Վայք	69700	83800	83800
	Եղեգնաձոր	88900	106400	106400
	Զերմուկ	118000	145300	145300
Տավուշ	Դիլիջան	82200	106000	106000
	Իջևան	109600	152100	152100
	Բերդ	37400	40600	40600
	Նոյեմբերյան	29100	31200	31200
	Այրում	21000	21100	21100

2009թ. հունվարին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. դեկտեմբերի համեմատ նվազել են 2.3%-ով:

2009թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 282 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 48, մյուս մարզերում միասին վերցրած՝ 234: 2009թ. հունվարին, 2008թ. դեկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 39.6%-ով, ընդ որում Երևանում՝ 54.3%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 35.4%-ով: 2008թ. հունվարի համեմատ, անհատական բնակելի տների

առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 39.6%-ով, ընդ որում Երևանում՝ 60.7%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 32.2%-ով:

2009թ. հունվարին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	հունվար 2008թ.	հունվար 2009թ.	դեկտեմբեր 2008թ.
Կենտրոն	484100	510000	510000
Արաբկիր	391300	426700	438700
Քանաքեռ Զեյթուն	305900	322900	325900
Նորք Մարաշ	258600	314100	314100
Ավան	263200	286200	291200
Էրեբունի	263400	291500	291400
Շենգավիթ	272500	291900	293900
Դավթաշեն	286400	324500	324500
Աջափնյակ	266700	292400	302400
Մալաթիա-Սեբաստիա	264400	287200	295700
Նուբարաշեն	145500	172300	172300
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	291100	320000	323600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. հունվարին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. դեկտեմբերի համեմատ նվազել են 1.1%-ով:

2009թ. հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հունվար 2008թ.	հունվար 2009թ.	դեկտեմբեր 2008թ.
Արագածոտն	Աշտարակ	116800	145400	145400
	Ապարան	34100	38900	38900
	Թալին	43400	49000	48900
Արարատ	Արտաշատ	96800	108000	112300
	Մասիս	121200	148800	146800
	Վեդի	78300	91900	91900
	Արարատ	63500	79200	75700
Արմավիր	Վաղարշապատ	153500	177000	180800
	Արմավիր	114000	128100	132500

Գեղարքունիք	Սևան	80200	107500	107500
	Գավառ	44300	56000	55800
	Մարտունի	65600	78200	78000
	Վարդենիս	31400	37500	37400
	Ճամբարակ	19100	22000	21500
Լոռի	Վանաձոր	86900	110200	110200
	Ստեփանավան	47500	54600	54000
	Սպիտակ	61300	68000	67800
	Ալավերդի	30300	36800	37300
	Տաշիր	31700	38200	38100
	Թումանյան	9000	10400	10400
	Շամլուղ	6000	7400	7400
	Ախթալա	15200	16200	16200
Կոտայք	Արուսյան	162200	185200	192300
	Նոր Հաճն	119200	145100	147300
	Բյուրեղավան	90300	122200	123400
	Եղվարդ	111300	133700	133700
	Հրազդան	63900	81500	81400
	Ծաղկաձոր	191200	276000	274600
	Չարենցավան	79300	104400	103800
Շիրակ	Գյումրի	91900	125900	125500
	Արթիկ	52400	65800	64000
	Մարալիկ	29500	32700	32700
Սյունիք	Գորիս	91500	127000	126800
	Կապան	81900	112400	112400
	Միսիան	64900	91100	90800
	Մեղրի	47500	53800	52000
	Ագարակ	30000	33400	33300
	Դաստակերտ	9900	10400	10400
Վայոց Ձոր	Վայք	73500	87700	87500
	Եղեգնաձոր	94500	111800	111300
	Ջերմուկ	67800	103500	101700
Տավուշ	Դիլիջան	85800	115600	119400
	Իջևան	112000	154200	153200
	Բերդ	39600	42600	42600
	Նոյեմբերյան	34700	36700	36700
	Այրում	22800	23000	23000

2009թ. հունվարին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. դեկտեմբերի համեմատ նվազել են 0.2% - ով:

Ընդհանուր առմամբ, 2009թ. հունվարին հանրապետությունում օտարվել են 894 միավոր /540.50 հա/ հողեր, որից Երևանում՝ 57 միավոր /124.58 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 29 միավոր /4.83 հա/ հողեր, որից Երևանում՝ 16 միավոր /1.34 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 447 միավոր /341.89 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.20 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 296 միավոր /185.19 հա/, որից Երևանում՝ 43 միավոր /122.21 հա/,

- հասարակական կառուցապատման հողեր՝ 138 միավոր /9.92 հա/, որից Երևանում՝ 12 միավոր /2.17 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 10 միավոր /1.37 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 3 միավոր /2.12 հա/

2009թ. հունվարին հանրապետությունում օտարված հողերից 777 միավորի /443.53 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 49 միավոր /123.72 հա/, նվիրատվության գործարքներ՝ 88 միավորի /73.77 հա/, որից Երևանում՝ 7 միավոր /0.83 հա/ և փոխանակության գործարքներ՝ 29 միավորի /23.20 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.03 հա/:

Հանրապետությունում 2009թ. հունվարին, 2008թ. հունվարի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 50.2%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 47.0%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 53.7%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 70.6%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Երևանում՝ 123.72 հա, որից 0.20 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 32.0%-ը կամ 249 գործարքներ /243.82 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 19 գործարքներ /120.90 հա/, իսկ 67.4%-ը կամ 524 միավորը /199.59 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 30 միավոր /2.83 հա/:

2009թ. հունվարին հանրապետությունում գրանցվել է հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 4 գործարք /0.12 հա/:

Ստորև ներկայացվում է 2009թ. հունվարին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի, որտեղ ներառված չեն հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	0	0.00	11	119.76	8	1.14	2	0.20	0	0.00	25	1.81	3	0.81
Արագածոտն	28	26.96	0	0.00	2	0.12	8	0.75	24	24.94	0	0.00	12	1.15	1	0.20
Արարատ	1	1.30	1	0.01	3	0.31	5	0.02	61	33.52	2	0.06	41	4.07	2	0.09
Արմավիր	6	7.29	0	0.00	3	0.26	4	0.33	66	41.52	0	0.00	41	4.02	3	0.13
Գեղարքունիք	6	46.23	1	0.02	10	1.11	4	0.31	9	10.21	0	0.00	9	0.77	6	2.63
Լոռի	1	0.50	0	0.00	2	0.07	6	0.26	22	14.02	0	0.00	9	0.66	9	0.28
Կոտայք	24	7.38	0	0.00	1	0.06	11	0.19	52	22.00	0	0.00	40	3.53	5	0.53
Շիրակ	5	16.58	2	0.20	15	0.40	18	0.51	19	14.71	0	0.00	8	1.10	3	0.18
Սյունիք	0	0.00	3	0.24	0	0.00	4	0.13	7	6.20	1	0.85	3	0.39	1	0.002
Վայոց Ձոր	1	0.60	0	0.00	12	0.77	12	0.32	10	2.42	0	0.00	4	0.28	1	0.004
Տավուշ	9	8.64	0	0.00	6	0.25	14	0.70	13	3.52	0	0.00	9	0.76	0	0.00
Ընդամենը	81	115.48	7	0.47	65	123.11	94	4.66	285	173.26	3	0.91	201	18.54	34	4.86

Ստորև ներկայացվում է 2009թ. հունվարին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի և ըստ հողերի նպատակային նշանակության, բացառությամբ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
նան	11	0.68	0	0.00	5	0.49	6	0.19	8	120.22	0	0.00	0	0.00	6	119.27	2	0.95
ագածոտն	1	0.003	0	0.00	0	0.00	1	0.003	37	27.83	28	26.96	0	0.00	2	0.12	7	0.75
արատ	3	0.01	0	0.00	0	0.00	3	0.01	6	0.33	0	0.00	1	0.01	3	0.31	2	0.01
մավիթ	1	0.001	0	0.00	0	0.00	1	0.001	12	7.87	6	7.29	0	0.00	3	0.26	3	0.32
դարբունի	1	0.06	0	0.00	1	0.06	0	0.00	20	47.60	6	46.23	1	0.02	9	1.05	4	0.30
շի	1	0.01	0	0.00	1	0.01	0	0.00	8	0.82	1	0.50	0	0.00	1	0.06	6	0.26
տայք	3	0.08	0	0.00	1	0.06	2	0.02	33	7.55	24	7.38	0	0.00	0	0.00	9	0.17
ռակ	2	0.04	0	0.00	1	0.02	1	0.02	38	17.65	5	16.58	2	0.20	14	0.38	17	0.49
ունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	7	0.37	0	0.00	3	0.24	0	0.00	4	0.13
յոզ Չոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	25	1.69	1	0.60	0	0.00	12	0.77	12	0.32
վուշ	8	0.63	0	0.00	1	0.02	7	0.61	21	8.97	9	8.64	0	0.00	5	0.23	7	0.10
ըամենը	31	1.51	0	0.00	10	0.66	21	0.85	215	240.90	80	114.18	7	0.47	55	122.45	73	3.80

Հանրապետությունում 2009թ. հունվարին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 1 գործարք /1.30 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2009թ. հունվարին, 2008թ. հունվարի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 66.8%-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 61.9%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել է 67.0%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 66.0%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 68.9%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 65.4%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 72.0%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2009թ. հունվարին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների						Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների					
	Միավորների քանակը		Մակերեսը /հա /		արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		Միավորների քանակը		Մակերեսը /հա /		արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	
					Նվազագույն	Առավելագույն					Միջին	Նվազագույն
Արագածոտնի մարզ												

Աշտարակ	24	23.52	32.2	286.0	97.8	19	12.64	365.0	12000.0	4000.0
Ապարան								86.5	2727.3	490.2
Թալին	3	3.39	53.7	80.0	63.4	3	6.30	93.6	5494.5	501.0
Ծաղկահովիտ	1	0.05	700.0	700.0	700.0	2	6.00	79.5	1000.0	215.5
Արարատի մարզ										
Արտաշատ						22	11.51	335.1	10833.3	1973.7
Մասիս						10	2.79	200.0	11904.8	2710.0
Վեդի						22	12.08	207.0	10795.1	1800.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						38	23.42	294.3	9090.0	1122.0
Բաղրամյան	1	1.00	188.0	188.0	188.0	2	1.17	90.6	2561.1	655.9
Վաղարշապատ	5	6.29	191.6	622.5	450.0	23	13.77	444.4	11764.7	2385.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ								199.8	1875.0	445.0
Ճամբարակ	5	44.60	78.6	307.1	182.1	6	7.18	60.5	953.3	205.2
Մարտունի						1	0.19	51.1	2850.0	531.4
Սևան								52.2	2134.8	212.5
Վարդենիս	1	1.63	55.2	55.2	55.2	2	2.84	41.2	2575.1	348.5
Լոռու մարզ										
Ալավերդի						10	4.10	170.4	6424.2	1080.0
Գուգարք	1	0.50	398.0	398.0	398.0	3	1.70	234.6	6065.9	1053.5
Սպիտակ						1	0.92	250.0	5555.5	575.3
Ստեփանավան						4	2.52	90.6	1686.6	415.8
Տաշիր						4	4.79	45.3	1384.4	218.2
Կոտայքի մարզ										
Արովյան	22	5.30	99.0	1329.7	354.7	23	7.70	279.3	11942.7	4685.8
Եղվարդ	2	2.09	877.3	877.3	877.3	21	7.23	174.4	11971.8	3292.5
Հրազդան						7	6.68	130.5	10256.4	1365.8
Շիրակի մարզ										
Ախուրյան						8	7.44	252.0	1693.1	485.5
Ամասիա	5	16.58	68.2	150.6	118.8	1	2.45	40.9	261.0	127.8
Անի						3	1.59	110.6	546.9	287.8
Աշոցք								58.5	215.8	122.5
Արթիկ						7	3.23	79.4	1428.6	200.0
Սյունիքի մարզ										
Գորիս						2	2.59	92.6	1023.2	416.9
Կապան						1	0.86	120.0	841.6	258.8
Մեղրի								193.0	3000.0	554.8
Սիսիան						4	2.75	46.3	1977.4	292.1
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	1	0.60	178.3	178.3	178.3	9	2.05	125.0	10000.0	1430.2
Վայք						1	0.37	58.8	1430.7	526.2
Տավուշի մարզ										
Բերդ	2	0.79	361.6	361.6	361.6	9	2.04	213.3	3783.8	442.8
Իջևան	7	7.85	408.1	5808.0	1296.7	2	0.13	267.5	9454.5	938.5
Նոյեմբերյան						2	1.35	46.7	7368.4	685.8

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2009թ. հունվարին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	2	1225.0	175.0	2488.4	1331.7	11	8716.0	130.7	22200.0	2574.0
Ապարան						1	2770.0	124.1	609.6	232.0
Թալին								63.2	1454.8	120.5
Ծաղկահովիտ								60.0	214.3	75.1
Արարատի մարզ										
Արտաշատ						8	9010.0	173.9	7140.3	927.0
Մասիս	3	3092.0	1933.9	1934.2	1934.0	21	15485.0	187.5	25000.0	1220.7
Վեդի						12	16158.0	126.1	5000.0	680.4
Արմավիրի մարզ										
Արմավիր	3	2600.0	112.0	425.3	320.8	13	15537.0	131.6	9090.9	1220.0
Բաղրամյան								100.0	833.3	161.1
Վաղարշապատ						27	23788.0	197.4	26528.4	1558.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	4	4518.0	132.0	132.0	132.0	3	2240.0	186.6	1084.3	413.2
Ճամբարակ								71.3	2286.2	115.0
Մարտունի	4	2126.0	113.4	133.4	113.4	5	4958.0	119.3	5000.0	272.8
Սևան	1	3841.0	432.1	432.1	432.1	1	500.0	240.0	3110.4	190.4
Վարդենիս								72.5	987.2	140.0
Լոռու մարզ										
Ալավերդի						3	3330.0	114.3	1388.9	162.8
Գուգարք	1	560.0	5331.9	5331.9	5331.9	4	2494.0	77.9	14083.3	654.3
Սյիտակ								104.9	1348.3	157.3
Ստեփանավան						1	164.0	88.2	1666.7	126.5
Տաշիր						1	600.0	45.3	400.0	74.3
Կոտայքի մարզ										
Աբովյան						14	10880.0	264.5	35353.5	2089.6
Եղվարդ						18	15728.0	173.6	27000.0	2452.8
Հրազդան						8	8692.0	117.7	34848.5	1354.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	13	3420.5	290.4	5479.5	2894.8			113.6	18750.0	335.1
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի						4	5776.0	67.9	180.6	106.5
Աշոցք								40.8	144.0	58.1
Արթիկ	1	400.0	275.0	275.0	275.0	4	5230.0	111.8	5000.0	210.2
Սյունիքի մարզ										
Գորիս								112.2	1700.0	268.8
Կապան						1	709.0	67.9	2638.9	218.8
Մեղրի						1	550.0	68.5	632.9	135.5
Սիսիան						1	2630.0	123.5	875.0	155.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	12	7650.0	73.3	760.0	461.3	2	1413.0	96.7	7659.6	353.8
Վայք						2	1400.0	120.7	1448.3	135.4
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	91.5
Իջևան	5	2341.0	1800.0	2500.0	2205.0	8	6974.0	74.1	14423.1	478.7
Նոյեմբերյան						1	660.0	125.0	1948.1	155.8

2009թ. հունվարին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 11 գործարքներ 1.37 հա մակերեսով, ընդ որում 1-ը՝ /0.04 հա/ Արարատի և 10-ը՝ /1.33 հա/ Լոռու մարզերում:

2009թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 715 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.8%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 75.4%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2009թ. հունվարին 2008թ. դեկտեմբերի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 32.5%-ով, իսկ 2008թ. հունվարի համեմատ՝ 14.5%-ով:

2009թ. հունվարին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 34 բնակարանների, 33 անհատական բնակելի տների, 361 հասարակական, 57 արտադրական նշանակության օբյեկտների, 212 միավոր /2752.01 հա/ հողերի և 18 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2009թ. հունվարին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 15 վարձակալության գործարքների /այդ թվում 4 միավոր /33.87 հա/ կառուցապատման իրավունքով/ քանակը 2008թ. դեկտեմբերի համեմատ աճել է 66.7%-ով, իսկ 2008թ. հունվարի համեմատ նվազել՝ 68.1%-ով: 2009թ. հունվարին հանրապետությունում վարձակալված 2752.01 հա հողերից 35.51 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 2716.50 հա հողերի 215.86 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 1706.55 հա, որից 1505.46 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 71.00 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2009թ. հունվարին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	1	5.93
Արարատ	3	20.00	17	30.34
Արմավիր	0	0.00	4	21.91
Գեղարքունիք	0	0.00	4	21.70
Լոռի	3	51.00	21	511.43
Կոտայք	0	0.00	8	302.75
Շիրակ	0	0.00	11	21.66
Սյունիք	0	0.00	37	1505.46
Վայոց Ձոր	0	0.00	4	1.94
Տավուշ	0	0.00	8	5.54
Ընդամենը	6	71.00	115	2428.66

2009թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 404 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.6%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2008թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 77.2%-ով, իսկ 2008թ. հունվարի համեմատ՝ 59.1%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /44.8%/, առանձնատների /19.3%/, հասարակական նշանակության օբյեկտների /12.6%/ և հողերի /14.6%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 221 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2008թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 70.5%-ով, իսկ 2008թ. հունվարի համեմատ՝ 38.6%-ով: 2009թ. հունվարին հանրապետությունում գրավադրվել են 17.31 հա հողեր, որից 6.41 հա՝ Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 39.0%-ը կամ 9.75 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Երևանում՝ 6.41 հա:

2009թ. հունվարին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 13 գործարքներ, որից 11-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 69.2%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 7.7%-ն՝ անհատական բնակելի տների, 15.4%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների և 7.7%-ը՝ հողերի նկատմամբ: 2008թ. դեկտեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 83.3%-ով, ընդ որում Երևանում՝ 82.0%-ով, մյուս մարզերում՝ 88.2%-ով, իսկ 2008թ. հունվարի համեմատ նվազել է 88.8%-ով, ընդ որում Երևանում՝ 81.0%-ով, մյուս մարզերում՝ 96.6%-ով:

2009թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման 3 և 1 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: Մասնավորեցման գործարքների քանակը 2008թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 33.3%-ով, իսկ 2008թ. հունվարի համեմատ՝ 63.6%-ով: 2009թ. հունվարին մասնավորեցման գործարքներն արձանագրվել են 2-ը՝ Գեղարքունիքի, 1-ական՝ Արագածոտնի և Տավուշի մարզերում:

2009թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1159 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2008թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 52.7%-ով, իսկ 2008թ. հունվարի համեմատ՝ 16.7%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 15.9%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /37.2%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն